ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2014թ. հունիսի 13 N 60 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՄԵԾԱՁՈՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐԱԳԱԾԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, <<ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԿԱՅՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՀՆԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՍԻՓԱՆԻ ՖԵՐԻԿԵ ՈՒՍԸՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2014 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Մեծաձորի հիմնական դպրոց>>, <<Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոց>>, <<Սարալանջի հիմնական դպրոց>>, <<Կայքի միջնակարգ դպրոց>>, <<Հնաբերդի միջնակարգ դպրոց>>, <<Սիփանի Ֆերիկե Ուսըվի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2011, 2012 և 2013 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Լուիզա Հարությունյանի,Կարեն Սուքիասյանի,Իշխան Բարսեղյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 21 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2014 թվականի հունիսի 13-ից ավարտել 2014 թվականի հուլիսի 11-ին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ